ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՄԻԱ ՏԵՎԿԱՆՑ, Ճանապարհորդություն Բարձր Հայք և Վասպուրական (1872—1873), Երևան, ՀՀ ԳԱ հրատարակչություն, 1991, 343 էջ։

Հայաստանի գիտությունների ակադեմիայի հրատարակչությունը հայ ընթերցողի դատին է հանձնել Երեմիա Տեվկանցի «Ճանապարհորդություն Բարձր Հայք և Վասպուրական (1872—1873 թթ.)» աշխատությունը։ Հեղինակի ձեռագիրը պատրաստել և ծանոթագրել է պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հ. Մ. Պողոսյանը։

Դժբախտաբար, այսօր, երևի թե միայն հայ ժողովրդի պատմությամբ զբաղվողներին է հայտնի Երեմիա Տեվկանցը։ Ո՞վ է Տեվկանցը։ Նա ծնվել է 1829 թ. Վանում։ Ավարտելով Վարագա ժառանգավորաց վարժարանը, Տեվկանցը կամ կղզում կարգվում է վարդապետ։ Սկզբում Վարագա վանքի վանահայրն էր, հետո հաջորդաբար՝ Վանի, Ռիշլիսի, Մուշի, Ջմշկածագի, Արաբկիրի և Խարբերդի հայոց հոգևոր առաջնորդը, Կ. Պոլսի պատրիարքական փոխանորդը, ազգային ժողովի և գավառական քննիչ հանձնաժողովի անդամ։ 1862 թ. Զեյթունի հերոսական ապստամբության ժամանակ եռանդուն գործունեություն է ծավալել ապստամբներին օգնելու համար։

Երեմիա Տեվկանցը հեղինակ է մի շարք աշխատությունների, որոնց հիմնական թեման եղել է հայրենի երկիրը, ժողովրդի պատմությունն ու մշակույթը ուսումնասիրելու, ազգապահպանության ոգին պահպանելու կոչը։ Տեվկանցը հրատարակել է երկու գիրք՝ «Հայրենյաց երգեր» (Վարագ, 1865) և «Հայրենասիրություն հայոց» (Կ. Պոլիս, 1872)։ Ուշագրավ է վերջին գիրքը, որը 548 էջանոց մի ստվար հատոր է։ Այստեղ բազմաթիվ էջեր են նվիրված հայոց պատմության հարցերին, վերլուծվում է հայ ժողովրդի անցյալը։ Գրախոսվող գրքի առաջաբանի հեղինակը հատկապես ընդգծում է Տեվկանցի հետևյալ խոսքերը. «Արդյոք ո՞վ կարող է առանց հայրենասիրության զմարդկություն սիրել, արդյո՞ք նա, որ յուր հայր, մայր, զեղբայր և զազգականս չսիրե, կարող է համարձակ ասել, թե ես օտարներ սիրեմ...» (էջ 5—6)։ Իսկական հայրենասերը պետք է լավ իմանա իր ազգի պատմությունը, որը «մեր հոգին նորոգե, մեր սիրտը արիացնե, մեր զգացումն ազնվացնե» (էջ 6)։ Որքա՞ն այժմեական են հնչում այս խոսքերը։ Ըստ Ե. Տեվկանցի, այն հայը, որ չգիտե իր ազգի պատմությունը «ո՞չ կատարյալ հայ է, ո՞չ կատարյալ մարդ և ո՞չ կատարյալ առաքինի...» (էջ 6)։

Տեվկանցը կրքոտությամբ հանդես էր գալիս պանդխտության դեմ։ Հայաստանի չվող թռչունները վերադառնում են, սակայն հայը թողնելով հայրենիքը, այլևս չի վերադառնում։ Եվ այդ թռչուններին դիմելով՝ Տեվկանցը գրում էր. «Երանի ձեզ, հազար երանի, թռչունք Հայաստանի, որ աշուն երթայք և գարուն դառնաք, վա՜յ մեզ, հազար վայ, որ մեկ անգամ հեռանալով՝ այլևս չեմք ուզեր վերադառնալ» (էջ 6)։ Հայրենիքից հեռացածներին դիմելով, նա ասում է. «Հայրենյաց փոշի քան զօտարի վարդն լավն է» և հայրենիքից դուրս եղածների համար «Խաղաղ չկա, հեշտին և խաղաղ կյանք չկա, իշխանություն, փառք և պատիվ չկա. օտար աշխարհի մեջ ճոյու համար ուրախություն, հարստություն չկա. Ճոյու համար հայրենասիրություն և ազգություն չկա» (էջ 6)։

Տեվկանցի ուշադրությունից չեն վրիպել նաև վաշխառուներն ու կաշառակերները, որոնք անարգել կողոպտում են ժողովրդին ոչնչից չվախենալով։ Կաշառակեր մարդիկ գավոում են իրենց հայրենիքը։ «Հայրենատեաց է իշխան յորժամ սիրէ զկաշառ» (էջ 7)—ահա հայրենասեր հոգևորական պատմագրի դատավճիռը։

Ներկա հրատարակության առաջաբանից ընթերցողի առջև բացվում է ակնավոր գործի՝ ձեռագիր աշխատությունների ցանկը, որոնք պահվում են Մատենադարանում ու մի շարք այլ արխիվներում։ Նշենք դրանցից մի քանիսը։

Ձեռագիր № 4184, բաղկացած է 218 թերթից (436 էջ)։ Այստեղ շատ տեղեկություններ կան Վանի այն ժամանակվա դպրոցների, աշուղների մասին։ Կան նկարագրություններ եկեղեցական տոների մասին։ Քննադատվում են 1870—1880-ականների երիտասարդները, որոնք «խաղան թուղթ ու գոմար», «ծխախոտ գործածեն» և որոնք վատ բարքեր ունեն։

Հետաքրքիր են Վանի թաղերի, փողոցների նկարագրությունները։ Տպավորիչ է հարսանիքներից մեկի նկարագրությունը։

Ձեռագիր № 4180, 247 թերթ (494 էջ)։ Տրվում են հետաքրքիր տեղեկություններ Վարագա վանքի մասին։ Նկարագրվում են 1853—1856 թթ. պատերազմի ժամանակ Վասպուրականի ժողովրդի կրած տառապանքները։

Ձեռագիր № 4177, 331 թերթ (494 էջ)։ Այստեղ զգալի տեղ է հատկացված Զեյթունի 1862 թ. ապստամբությանը։ Տրվում է Տարոնի նկարագրությունը, պատմվում Մ. Խրիմյանի՝ Մուշ ժամանելու մանրամասները։

Ձեռագիր № 4179, 378 թերթ (756 էջ)։ Նկարագրում է իր ճանապարհորդությունը դեպի Արարատյան դաշտ, Երևան, Ալեքսանդրապոլ, Աշտարակ, Ապարան, Անի, Կարս և այլն։ Բերվում են շատ արժեքավոր տեղեկություններ նշված վայրերի ավերակ վանքերի, բերդերի, գյուղերի, ժողովրդի նիստուկացի, դպրոցների և այլնի մասին։

Ձեռագիր № 4182, 713 թերթ (1424 էջ)։ Սա Տևկանցի ամենածավալուն ձեռագիրն է, որտեղ անչափ հետաքրքիր վկայություններ կան 1853—1856 թթ. պատերազմի ժամանակ թուրքական զորքերի խժդժությունների մասին։ Պատմվում է թուրքական իշխանությունների կողմից 1876 թ. սեպտեմբերին Վանի շուկայի հրդեհի ու թալանի մասին։ Նկարագրվում է 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո ժողովրդի ծանր վիճակը։

Ամփոփելով մեր խոսքը Երեմիա Տևկանցի կենսագրության մասին, ասենք նաև, որ նրանք երեք եղբայրներ էին։ Տեր-Սարգսենց (Տևկանց) Արիստակեսը (1844—1896) 1894 թ. կարգվեց Վարագա վանքի վանահայր։ Նա հասարակական հայտնի գործիչ էր, բանահավաք։ 1896 թ. հայկական կոտորածների ժամանակ զոհվեց թուրքական հրոսակների ձեռքով։ Տեր-Սարգսենց (Տևկանց) Սեդրակը (1845—1938) նշանավոր գրող էր, հրապարակախոս, հասարակական-քաղաքական գործիչ։ Նրա գործերից առավել հետաքրքիրը «Շահեն ի Սիպիր կամ գաղթական հայը» վեպն է, որի վրա զգացվում է Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» ազդեցությունը։ Նա իր գործերում քննադատում էր կաթոլիկ եկեղեցու հավատորսությունը, նշավակում այլ քրիստոնյաների նկատմամբ Հռոմի հալածանքները։ Սեդրակը եղել է 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Մ. Խրիմյանի առեղծած սովյալներին օգնող հանձնաժողովի անդամ։ Երկար տարիներ ապրել է Եվրոպայում և մահացել Նիցցայում։

Պատմաբաններին ու ընթերցող լայն շրջաններին հասցեագրված «Ճանապարհորդություն Բարձր Հայք և Վասպուրական (1872—1873 թթ.)» աշխատությունը արդյունք է Կ. Պոլսի պատրիարք Մ. Խրիմյանի հանձնարարության, որի հիման վրա Ե. Տևկանցը ճանապարհորդել է Էրզրումի, Կարսի և Վասպուրականի շրջաններում և գրել իր տպավորությունները՝ նկարագրելով այդ տարածքի վրա ապրող հայերի կյանքը, նրանց սոցիալ-տնտեսական պայմանները։

Այժմ հետևենք Ե. Տևկանցի ճանապարհորդությանը։ 1872 թ. հուլիսի 21։ Ուրբաթ։ Այդ օրը Կ. Պոլսից նավով Ե. Տևկանցը՝ մեկնեց դեպի Պոնտոս նավահանգիստ։ Այնուհետև նա մանրամասնորեն նկարագրում է Պոնտոսից մինչև Հայաստանի սահմանն ընկած ճանապարհը։ Չոր ու ցամաք նկարագրությունը հանկարծակի դառնում է պատկերավոր, հյութեղ, երբ Տևկանցը իր ճանապարհորդ ընկերների հետ մտնում է Հայաստան։ «Մեր բնիկ հայրենյաց,— գրում է Տևկանցը,— այն է՝ ցանկալի Հայաստանի քարն ու հողն, մարգագետին, խոտն, ծաղիկ և ծառն ու անտառն և թռչուն, արտն ու արոտն, մշակն և հոտաղն, արորն և կայն և մեջ այսոցիկ ամենեցուն ողջունեցինք հովվական և նահապետական կենաց պարզություն ...Այս ավուր ուղևորության միջոցին մեր բովանդակ ուշադրություն դարձած էր Հայաստանի նյութական և բարոյական կենաց վրա...» (էջ 27)։

Բայց ճանապարհորդներին վիճակված չէր երկար վայելել հայրենի աշխարհը, նրա գեղեցկությունը։ Նրանք նոր էին մտել Բաբերդ, երբ տեղի «քանի մը նշանավոր ազգայինք» պատմեցին քաղաքի հայ բնակչության գլխին եկած աղետի մասին։ Նրանք պատմում էին, «թե ինչպես այլ կրոնամոլ բարբարոսական խուժան խուռն բազմությամբ գրոհ տված էր զհայս, առհասարակ զատակելու, գանակոծել զոմն և զկրպակս նոցա ավար հարկանել, թե ինչպես... վարժապետն իբրև զոչխար 'ի սպանդ վարեր ինքն սպանելս և արյան խմելո, սակայն աստված զնա պահպանելով ազատած [էր] անոնց ձեռքեն» (էջ 28)։

Իսկ ինչով պիտի օգնեին ու մխիթարեին քաղաքի դժբախտ բնակիչներին։ Եվ միամիտ ու ազնիվ Երեմիան գտնում է մխիթարելու միջոցը՝ եկեղեցում հավաքված հայերին «հիշեցնելով և բացատրելով, որ ավետարանի երեք պատվիրանաց աքանչելի զորություն և ուժգնու-

թյան քրիստոնեից սրտի մտած և կյանքի վրա. այն է՝ ա. սիրել զընկեր. բ. միաձայնել ընկերին և չնեղել 'ի մարդկանե. Եթե հայք սույն երեք պատվիրանաց միշտ ունկնդիր լինեին և վ—րզով կատարեին, երկրիս վրա երջանիկ կապրեին, երկնից մեջ հավիտենական փրկություն կը ժառանգեին, ազգաց մեջ փառավոր ապրելով միշտ թշնամյաց դեմ զորավոր լինելով հարստահարություններե ազատ կլինեին և շատ անգամ կհաղթեին, իսկ եթե սույն փրկարար պատվիրաններ չպահեն, երկրիս վրա թշվառ, երկնից փրկությենեն հեռի, ազգաց մեջ անպատիվ և թշնամվո առաջ միշտ տկար երևալով կհարստահարվին» (էջ 29)։

Ըստ Տեկանցի տվյալների, Բաբերդն ուներ 1000 տուն բնակիչ, որից 230-ը հայ, իսկ «մնացյալն տաճիկք, որք թե ազգաւ, թե կրոնամոլ և թե բարբարոսաբար կվարվին հայոց դեմ» (էջ 35)։ Քաղաքում կար դպրոց, որը «նորոգելու ձեռնարկած էին, բայց դեռ չէին ավարտած, աղջկանց դպրոց չկա Բաբերդի մեջ»։ Տեկանցը եղել է Բաբերդի դպրոցում։ Ստուգելով աշակերտների գիտելիքները, նա մեկ-երկու ուրվագծերով տալիս է աշակերտներին մատուցվող գիտելիքների մակարդակը։ Այսպես, օրինակ. «...Եկա 'ի դասարան, ուր Կարապետ պատվելին ներկայացույց մեզ յուր հառաջադեմ աշակերտներեն, քանիս և սկսավ խնդրել 'ի մենջ, որ թույլ տանք իրեն, որ ինքն հարցմունս աշակերտաց և մենք միայն ունկնդիր լինինք, քանզի արդեն գիտեր աշակերտաց թերությունն և չէր վստահեր մեր հարցման վրա։ Ինչևիցե, քանի աշակերտաց տախտակի գրել և վերլուծել տվավ, կեսն ինքն կվերլուծեր և կեսն ևս վերլուծություն ինքն աշակերտին նորեն կուսուցաներ» (էջ 34)։

Ընթերցողը Տեկանցի հետ Կարին է մտնում այնտեղ գործող եկեղեցիների, դպրոցների նկարագրությամբ։ Տեկանցը տալիս է Կարինի բնակիչների՝ տղամարդկանց, կանանց, երիտասարդների հետաքրքիր և ուսանելի բնութագիրը։ Ահա այդ գողտրիկ նկարագրություններից մեկ-երկու քաղվածք. «Այր մարդիկ... բավական արիասիրտ և աներկյուղ են... Տղայք ուշիմ են և ուսման ընդունակ... ծնողաց հնազանդ են և խրատ լսելու պատրաստ և հլու աշխատություն և արհեստ կսիրեն և տղայական խաղերու մեջ շատ խաղամոլ չեն։ Կանայք... Խիստ գորովագութ որդվոց վրա ջերմ սիրով կսիրեն զավակներ և ընտանիք և զանոնք խնամելու մեջ մեծ հաճույք կզգան, մեծավ մասամբ պարկեշտություն կհարգեն և կատեն անպարկեշտությունը...» (էջ 39)։

Անչափ հետաքրքիր են Կարնո երևելի գերդաստանների նկարագրությանը նվիրված էջերը։

Ուշադրության արժանի են ճանապարհորդության ընթացքում այցելած վանքերի ու եկեղեցիների բազմակողմանի նկարագրությունները։ Բայց Տեկանցի գրիչը անխնա է դառնում, երբ հանդիպում է ապաշնորհ, ժողովրդի հոգսերով չապրող հոգևորականների։ «Մտաբերելս է,—գրում է նա,—թե երբ ժողովուրդ մի այսպիսի անփույթ հովված հսկողության ներքև կյանք կվարե, ուր կխեղդի նոցա կրոնական և բարոյական կենաց վախճան...» (էջ 134)։

Ե. Տեկանցի գրքում մեծ տեղ է հատկացված Խրիմյան Հայրիկին հասցեագրած նամակներին, որոնք բացի եկեղեցական վիճակների նկարագրություններից, անգնահատելի գանձ են հայ ազգագրության պատմության համար։

Հեղինակը ընթերցողին տանում է Ռշտունյաց գավառ և նրա առջև գեղեցիկ ու պատկերավոր նկարագրությունների հետ միասին բացում է թուրքական բռնադատիչների գործադրած գազանությունների մի անվերջանալի տեսարան։ Նա բավական մանրամասն է խոսում Ախթամարի վանքի ու միաբանության գործունեության մասին։ Անաչառ ու պահանջկոտ է Տեկանցը ժողովրդի համար դպրոցներ բացելու մեջ թերացած եկեղեցական գործիչների նկատմամբ։

Հետաքրքիր էջեր կան Հայոց ձոր, Մոկաց, Շատախի գավառների ու նրանց գյուղերի բնակիչների զբաղմունքի, նիստուկացի մասին։ Ահա, օրինակ, Շատախի հայերի բնութագիրը. «Շատախու ամբողջ հայեր մի բնածին սքանչելի աղնվություն և սրամտություն ունին, որ գոգ թե հազիվ տարեք գտանի, բոլոր բարեպաշտ և ընկերության մեջ հավատարիմ ջանասեր և աշխատասեր թե արք և թե մանավանդ կանայք յուրյանց լեռնամեջ վայրեր շատ կսիրեն և անկե բաժանվել մահ կհամարեն, շատ գործելու մեջ բավական ուշիմություն և հառաջադիմություն ունին» (էջ 224)։

Տեկանցը բերում է Վասպուրականում բնակություն հաստատած քրդերի մասին տեղեկություններ, մի շարք փաստերի միջոցով ընդգծելով, որ հայերի նկատմամբ նրանց բեկերի գործադրած բռնությունները չեն կասեցվում թուրքական իշխանությունների կողմից։ Հեղինակը դնում է հայոց լեզվի մաքրության խնդիրը՝ խոսելով Շատախի մասին։ Տեկանցը

դրում է. «Շատախոսիք գրոց մեջ խառն լինելով հայոց բառերու ամբողջություն և լեզվի կանոնավորություն ձիգածոեր են, ուստի բաց 'ի Վասպուրականի Հայերեն, ուրիշ տեղի հայեր խիստ դժվարությամբ կհասկանան նոցա լեզվի ծամածուռ արտահայտություն և խոսակցություն, հայոց բառերու զորս մասն գրտերեն առած են, երեք մասի բառերն խեղաթյուրելով կրճատած և այլափոխած են։ Տարակույս չկա, թե դպրոց և ուսումն միայն կարե սոցա բառեր և խոսակցություն կանոնավորել, զտել և մաքրել» (էջ 224)։

Ե. Տեկանցի ձեռագիրը ընդհատվում է Աղթամարի, Վարագա, Նարեկա վանքերի ու մի քանի գյուղերի նկարագրությամբ։

Ամփոփելով ասենք, որ անգնահատելի է ոչ միայն Ե. Տեկանցի աշխատանքը, այլև Հայաստանի գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի կողմից դրա հրատարակումը։

Համոզված ենք, որ սույն հրատարակման համար շանքեր ներդրած պրոֆեսոր Հ. Մ. Պողոսյանը նույնպիսի եռանդով կշարունակի իր սանձնած գործը և հայ ընթերցողին կհանձնի նաև Ե. Տեկանցի գրչին պատկանող մյուս աշխատությունները։

Վ. Գ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր